ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգ. և գյուղատնտ. գիտ. XI, № 9, 1958 Биол. и сельхоз. науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Գ. Ս. ԱՄԱՏՅԱՆ

ՌԱՑԻՈՆԱԼ ՊՍԻԽՈԹԵՐԱՊԻԱՅՈՎ ԱԼԿՈՀՈԼԻԿՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռացիոնալ պսիխոթերապիայով ալկոհոլիկների ամբուլատոր բուժումը մի նոր մեթոդ է, որը մշակվել է սովետական հոգեբույժների կողմից և օգտագործվում է հաջող կերպով։

Սովորաբար այս մեթոդը կիրառվում է մյուս միջոցների զուգակցությամբ և երբեմն էլ առանձին։

Մեր պրակտիկայում այս մեթոդի կիրառումը տվել է միանգամայն գոհացուցիչ արդյունք, և մենք այն լայնորեն օգտագործում ենք համարյա բոլոր հիվանդների նկատմամբ։

Ռացիոնալ պսիխոթերապիայի էությունը բժշկի և հիվանդի միջև տեղի ունեցող անկեղծ, մտերմական զրույցն է։ Հաջող արդյունքի հասնելու համար մեծ նշանակություն ունեն ներշնչման միջոցով բժշկի ձեռք բերած վստահությունը և հիվանդի հավատը կիրառվող միջոցների նկատմամբ։ Մենք, հիվանդների անամնեզը հավաքելիս ուշադիր կերպով որոնում ենք հիվանդության առաջացման պատճառներն ու մեխանիզմը, ծանոթանում հիվանդների բնավորության առանձնահատկություններին, ապրելակերպին և շրջապատի պայմաններին։ Միաժամանակ ուշադրությամբ լսում ենք նրանց դանդաղները և լավատեսությունն ներշնչում։ Աշխատում ենք համոզել անմիջապես թաղնել խմիչքը, նշելով որ, բացի օգուտից, որևէ անպատեհություն չի կարող առաջանալ։ Աշխատում ենք մոբիլիզացնել հիվանդների գիտակցությունն ու կամքը, ներշնչելով նրանց, որ հիվանդությունը հաղթահարելի է, պետք է միայն լսել բժշկին և կատարել նրա բոլոր խորհուրդներն ու նշանակումները։

Հերթական զրույցների ընթացքում բացատրում ենք, որ ալկոհոլիզմը անցյալի վնասակար մնացուկ է և ծագում է կենցաղային վատ սովորություններից, որոնց համար սովետական հասարակարգում չկան հիմքեր, որտեղ բոլոր քաղաքացիներն ապահովված են աշխատանքով ու կուլտուրական վայելքներով, և որ սխալ է ալկոհոլիզմի մեջ հաճույք որոնելը։ Մարդիկ առանց ալկոհոլի կյանքից և շրջապատից կարող են օգտակար շատ վայելքներ ստանալ և այլն։

Նման զրույցներն անց ենք կացնում հավաքական կամ անհատական ձևով, ելնելով կոնկրետ դեպքի առանձնահատկությունից։ Կիրառում ենք ռացիոնալ պսիխոթերապիայի բոլոր ձևերը՝ ներշնչական, թելադրական, համոզիչ և այլն։ Յուրաքանչյուր զրույցի ընթացքում շոշափում ենք ալկոհոլիզմի մի կողմը և լուսաբանում նրա վատ հետևանքները։

Առաջին հանդիպման ընթացքում, ուշադիր ու մանրամասն քննությունից հետո, աշխատում ենք վստահություն ու հավատ ներշնչել հիվանդներին, որ շուտով բուժվելու ու ազատվելու են իրենց անհանգստացնող պատճառներից։ Բացատրում ենք, որ վատ ախորժակը, ներվային վիճակը, ընդհանուր թուլությունը և այլն խմիչքի հետևանք են, և բուժվելուց հետո դրանք բոլորն անհետանալու են, որ աշխատունակությունն ավելանալու է, տրամադրությունը լավանալու, և իրենց կյանքը ավելի դուրեկան ու հաճելի է լինելու։ Միաժամանակ մոտալ գույներով նկարագրում ենք ապագան, եթե խմիչքը շարունակեն, կանգ առնելով ալկոհոլի վատ հետևանքների վրա։

Այնուհետև ցուցադրում ենք գունավոր նկարներ՝ առողջ ստամոքս, ալկոհոլիկի բորբոքված ստամոքս, նորմալ սիրտ, ալկոհոլիկի ճարպակալած սիրտ, նորմալ լյարդ, ալկոհոլիկի բորբոքված, ցիռոզի ենթարկված լյարդ և այլն, տալով համապատասխան լրացուցիչ բացատրություններ։ Ուրիշ նկարների միջոցով ցույց ենք տալիս ալկոհոլի ազդեցությունը բույսերի և կենդանիների վրա։

Երեք օր անց, հաջորդ հանդիպման ընթացքում, մարդու ֆիզիկական ու հոգեկան առողջության վրա ալկոհոլի թողած ընդհանուր վատ հետևանքների վերաբերյալ կարճատև դասախոսություն ենք անցկացնում, տալով կենդանի օրինակներ մեր անձնական փորձից։

Երրորդ հանդիպման ընթացքում խոսում ենք ժողովրդական մասսաների մեջ ալկոհոլային խմիչքների նկատմամբ գոյություն ունեցող այն սխալ կարծիքների ու նախապաշարմունքների մասին, որ իբր թե ալկոհոլը սնունդ է, ուժ է տալիս, ախորժակ է բացում և այլն, գիտականորեն բացատրելով դրանց սխալ լինելը։

Չորրորդ դասընթացի ընթացքում խոսում ենք աշխատանքի վրա ալկոհոլի բացասական ազդեցության մասին, նշելով, թե ինչպես ալկոհոլիկների մոտ աշխատանքի որակն ու քանակն իջնում է, կորցնում են աշխատանքի նկատմամբ սերն ու հետաքրքրությունը, ավելանում են գործազրկումները։ Այս նույն հանդիպման ժամանակ խոսում ենք ալկոհոլիզմի հետևանք հանդիսացող կենցաղային և աշխատանքային արկածների ու դժբախտ դեպքերի մասին։

Հաջորդ դասընթացների ընթացքում խոսում ենք ալկոհոլիզմի հետևանքով առաջացող հոգեկան և ներվային խանգարումների մասին։ Մեր փորձից բերում ենք կենդանի օրինակներ, թե ինչպես շատ խմելու հետևանքով մի հիվանդի ձեռքերը սաստիկ դողում էին և նա չէր կարողանում գրել, գդալը բռնել, ճաշել և այլն, և թե ինչպես բուժվելուց հետո այդ երևույթներն անցան և հիվանդը բոլորովին ապաքինվեց։ Մի ուրիշը խմելու պատճառով զրկվեց իր պաշտոնից ու դիրքից և մատնվեց թշվառության, իսկ մի ուրիշ հիվանդի ընտանիքը նույն պատճառով քայքայվեց ու դժբախտացավ։ Ալկոհոլիզմը, ասում ենք, այսպիսով ոչ միայն արգելք է հանդիսանում առաջադիմության, այլև պատճառ է դառնում հետադիմության և անկման։ Բացատրում ենք, թե ինչպես ալկոհոլիզմի հետևանքով ավելանում են խուլիգանական դեպքերը, օրինախախտումներն ու հանցագործությունները։

Հաջորդ դասընթացների ընթացքում օրինակներ ենք բերում մեր բուժված հիվանդներից, թե բուժվելուց առաջ ինչ վիճակում էին և բուժվելուց հետո ինչ փոփոխություններ տեղի ունեցան։ Երբեմն հրավիրում ենք մեր բուժված հիվանդներին պատմելու, թե բուժումից հետո իրենց մոտ ինչ փոփոխու-

թյուններ կատարվեցին։ Ալդպիսի օրինակները և կենդանի խոսքը շատ ազդեցիկ են լինում։

Մեր հսկողությանը ենթակա բուժված հիվանդները այս հանդիպումների ընթացքում պատմում են դեռ չբուժվող հիվանդներին, որ իրենք այժմ ավելի հանգիստ են, թե՛ տանը և թե՛ դրսում իրենց հանգիստ են պահում, որ իրենց աշխատունակությունը լավացել է, հարազատների նկատմամբ ավելի հոգատար վերաբերմունք են ցուցաբերում, հետաքրքրությունների շրջանակը լայնացել է, տանը մթնոլորտը խաղաղվել է և այլն։

Վերջապես, մի այլ գրույցի ընթացքում անվանի գիտնականների դորձերից ալկոհոլիզմի վերաբերյալ դանազան մեջբերումներ ենք անում։ Այս ձևով մեր հիվանդներին աստիճանաբար ծանոթացնում ենք ալկոհոլիզմի համարյա բոլոր վտանգներին։

Նման գրույցների ընթացքում առաջարկում ենք հիվանդներին հարցեր ուղղել մեզ՝ լրացուցիչ լուսաբանությունների համար։ Աշխատում ենք նրանց մղել դեպի ավելի բարձր, աղնվացնող և դաստիարակիչ վայելքներ՝ գրական, դեղարվեստական, գիտական և այլն։

Ինչպես ասացինք, ռացիոնալ պսիխոթերապիան սովորաբար զուգակցում ենք մյուս բուժամիջոցների հետ, հատկապես սպոմորֆինալին մեթոդով բուժում ստացողների նկատմամբ, որոնք ընդհանրապես երիտասարդ, ֆիզիկապես ամուր և ալկոհոլիկներ են լինում։ Ռացիոնալ պսիխոթերապիան, այսպիսով, որպես բուժական լրացուցիչ գործոն, շատ կարևոր դեր է խաղում ալկոհոլիկների բուժման գործում։

Մեր թեթև և միջին աստիճանի ալկոհոլիկներին այս մեթոդով բուժումից շատ գոհացուցիչ արդյունքներ ենք ստացել։ Ուժեղ ալկոհոլիկներն էլ օգտվում են ռացիոնալ պսիխոթերապիայից, թեև նվազ չափով։ Այս վերջինների մոտ ռեցիդիվները, որ հաճախ պատահում են հետագայում, նվազ ծանր են լինում։ Միայն դեղորդացիայով ալկոհոլիկների մոտ ռացիոնալ պսիխոթերապիան արդյունք չի տալիս, կամ էլ շատ թույլ և ժամանակավորապես կարող է մի քիչ օգնել։ Ալկոհոլիկների ամբուլատոր բուժման ժամանակ հարկավոր է ավելի լայն տեղ հատկացնել այս մեթոդին և կիրառել այն բժշկական արվեստի բոլոր հնարքներով։